ՀԱՅԿԱԲԵՐԴ ԱՄՐՈՑԸ

Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Դ. Ս. ՔԻԼԻՄՋՅԱՆ

Վանի թագավորության լավագույն ճարտարապետական հուշարձաններից մեկը՝ Հայկաբերդ ամրոցը, գտնվում է Վան քաղաքից 50 կմ դեպի հարավ-արևելք (նոր լեռնային ճանապարհով՝ 26 կմ), Վան-Հակկարի ճանապարհից 200 մ հեռավորության վրա։ Ամրոցից ոչ հեռու գտնվում է նախկին հայկական Աստվածաշեն գյուղը[1] (այժմ՝ Զաուշ թեփե)։ Ամրոցը կառուցված է 8 գագաթանի Բոլգաղը լեռնաշղթայի վրա, որը, տարածվելով 7—8 կմ երկարությամբ, հարավ-արևմտյան կողմում աստիճանաբար միանում է Գյուրփընար հովտին, որտեղով հոսում և Վանա լիճն է թափվում խոշոր գետը։

Հայկաբերդ ամրոցը XIX դ. վերջից գրավել է գիտնականների ուշադրությունը։ Դեռևս 1884 թ. Ս. Տեկանցը Վիեննա է բերում բերդից գտնված մի սեպագիր արձանագրություն, որը հրատարակում է Պ. Մյուլլերը[2]։ Արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. «Խալդյան մեծությամբ Սարդուրին Արգիշտիի որդին այս շտեմարանը կառուցեց 15300... կապի (կա) այնտեղ»[3]։ Հայկաբերդի առաջին ուսումնասիրողը եղել է Լեհման Հաուպտը, որն այստեղ կատարել է հետախուզական պեղումներ, կազմել ամրոցի սխեմատիկ հատակագիծը[4]։

Հայկաբերդ ամրոցի մասին հուշեր է թողել Գարեգին Սրվանձտյանը, որը, հիշատակելով Հայկի և Բելի ճակատամարտի մասին, նշում է, թե Հայոց ձոր կոչվող վայրում, մեկը մյուսից ոչ հեռու գտնվում են Նարեկ և Աստվածաշեն գյուղերը։ Վերջինիս մոտ, բլրի վրա տեղադրված է մի ամրոց, որը, ըստ երևույթին, հանդիսացել է Հայկի դաստակերտը[5]։ 1916 թ. Հայկաբերդ է այցելել Հ. Օրբելին[6], արել է հետաքրքիր դիտողություններ ամրոցի կառուցման վերաբերյալ և հավաքել իրերի մի փոքրիկ ժողովածու, որը պահվում է Էրմիտաժում։

1956 թ. ամրոցը նորից հետազոտել է Զ. Բառնիշը, որը կարճ նկարագրության հետ հրատարակել է ամրոցի սխեմատիկ հատակագիծը և մի քանի լուսանկարներ[7]։

Սկսած 1961 թ., 16 տարի անընդմեջ այստեղ պեղումներ է կատարել թուրք հնագետ Աֆիֆ Էրզենը, հրատարակելով պեղումների արդյունքների 1-ին հատորը[8]։ Այս աշխատության մեջ նա համառոտակի հիշատակում է,

---

[1] C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt 11/1. Berlin. 1910, S. 60.

[2] D. H. Muller, Österreichische Monatsschrift für den Orient, 1985. № 1, S. 24.

[3] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960. № 163.

[4] C. F. Lehmann-Haupt, *նշվ. աշխ., էջ 60։*

[5] *Գարեգին Սրվանձտյան, երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 78—79։*

[6] И. А. Орбели, Раскопки двух ниш на Ванской скале (Н. Я. Марр, А. И. Орбели, Доклады, Петроград, 1922, с. 10).

[7] Ch. A. Burney, Urartian Fortresses and Towns in the Van Region, Anatolian Studies 7, Ankara, 1957, p 45.

[8] A. Erzen, Çavustepe, Ankara, 1978.

որ, ըստ Երևույթին, ամրոցը կոչվել է Սարդուրիխինիլը, որտեղ կառուցվել է Իրմուշինի աստծուն նվիրված տաճար[9]: Հետաքրքիր է, որ արձանագրությունում պահպանվել է խոշար գետի բիայնական անունը՝ Դուգունա[10]: Նշենք, որ Հայկաբերդը Սարդուրի II-ի արձանագրություններում հիշատակվող Սարդուրիխուրդա (Սարդուրիխինիլի) ամրոցն է[11]:

Հայկաբերդը կառուցված է Բոլդաղը լեռնաշղթայի 2-րդ և 3-րդ կրաքարե ժայռագագաթների վրա, 90—110 մ հովտի մակարդակից բարձր (ծովի մակարդակից՝ 183 մ), որոնց միջև ձգված է մի փոքրիկ գոգավորություն: Ամրոցի շինարարության ժամանակ բարձունքի փեշերը հարթեցվել են, որի հետևանքով ամրոցի պարիսպները պաշտպանական նշանակության հետ միաժամանակ կրել են հենապատերի նշանակություն: Նմանօրինակ աստիճանաձև ուսուցավորումը առաջին անգամ 1916 թ. Հ. Օրբելին նկատել է Վանում և Հայկաբերդում[12]: Հետագայում այդ նույն կառուցվածքը նկատել են Գ. Հովհաննիսյանը՝ Թեյշեբաինիում[13], Հ. Մարտիրոսյանը՝ Արգիշտիխինիլիում[14], Ս. Եսայանը՝ Օշականում[15]:

Տեռասների այսպիսի կառուցողական տեխնիկան հանդես է եկել դեռևս վաղ բրոնզեդարյան կիկլոպյան ամրոցների կառուցման ժամանակ՝ Հառիճ. Էլառ, Գեղարոտ, Քաղսի և այլն, անընդմեջ հարատևելով մինչև մ. թ. ա. VI—V դդ.:

Հայկաբերդում կատարված բազմամյա պեղումների և ստորին բերդում գտնված սեպագիր արձանագրության շնորհիվ պարզվում է, որ այս ամրոցը հիմնադրվել է մ. թ. ա. VIII դ. և հարատևել մինչև Վանի թագավորության անկումը: Սակայն դժբախտաբար Էրզենը հրատարակել է միայն Վանի թագավորության շրջանին (մ. թ. ա. VII դ.) վերաբերող նյութերը: Նա համառոտակի խոսում է վերին բերդի պեղումների արդյունքների մասին: Վերին բերդը հատակագծում ուղղանկյուն է (80×65 մ), գտնվում է ստորինից արևելք և վերջինից բարձր է 30 մ: Պարսպապատերը լավ ամրացված են մի շարք ցայտուն արտահայտված որմահեցերով: Սրանք յուրաքանչյուր կողմից 5-ական են, իրարից հեռու են 7,5 մ—10 մ: Միայն արևելյան հատվածում և մասամբ արևմուտքում բերդն ունի պարիսպների երկրորդ շարքը: Պատերը շարված են զրահապատ եղանակով՝ կրկնաշար կոպտատաշ քարերով, որոնց մեջ լցված է քարահողի շաղախ: Նման շինարարական տեխնիկայով է կառուցված Բաղնոցի ամրոցը[16]:

Վերին բերդում 1973 թ. կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է 4,5×4,5 մ հատակագծով քառակուսի հարթակ՝ շրջապատված քարե պատերով, որը հետազոտողի կարծիքով հանդիսացել է սրբատեղի (տաճար): Հիմնվելով ստորին բերդում գտնված Սարդուրի II-ի սեպագիր արձանագրության վրա՝ Իրմուշինիի տաճարի կառուցման վերաբերյալ, ենթադրում են, որ այն ձոնվել է Խալդիին[17]: Իրմուշինի աստծո անունը մի

---

9 Նույն տեղում, էջ 7:

10 Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 65.

11 N. Adontz, Histo're d' Armenie, Paris, 1945, p. 236.

12 И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 10:

13 К. Л. Оганесян, Кармир блур VI, Ереван, 1985, с. 9.

14 А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, с. 77.

15 С. А. Есаян, Об урартских дворцовых комплексах Ошакана (Культурное наследие Востока, Л., 1985, с. 118).

16 C. H Burney, G R J, Lawson, Measured Plans of Urartian Fortresses. Anatolian Studies, 1960, 10, p 193

17 A. Erzen, նշվ. աշխ., էջ 7:

քանի անգամ հիշատակվում է Իշպուինիի՝ Սարգուրիի որդու և Մենուայի՝ Իշպուինիի որդու արձանագրություններում[18]։

Գ. Ղափանցյանի կարծիքով[19] Իրմուշինի անունը ստուգաբանվում է խեթական «Irmuši» անունով, որը նշանակում է «հիվանդություն»։ Ելնելով վերոհիշյալից, նա ենթադրում է, որ Իրմուշինին հանդիսացել է բժիշկներին հովանավորող աստվածությունը։ Եթե ավելի տեսակետը ճիշտ է, ապա Իրմուշինին կարելի է կապել Կարմիր բլուրում գտնվող կավե արձանիկների հետ, որոնց գլուխները և մեջքը ձկան թեփուկների տեսքի են, ներկված կապույտ գույնով։ Բ. Պիոտրովսկու կարծիքով, այս արձանիկները պատկերում են մարդկանց հիվանդություններից զերծ պահող աստվածների և նույնանում են ասսուրական էա աստվածուհուն[20]։

Հայկաբերդի հիմնական պեղումները կատարվել են ստորին բերդում, որը ձգվում է արևելք-արևմուտք, նեղ երկարավուն հարթակների վրա՝ ընդգրկելով 430×70 մ տարածք։ Ստորին բերդը պաշտպանված էր ամրաշինական բարդ կառուցվածքով, ուր ժայռերի եզրերով անցնող պարիսպներն ունեին նաև հենապատերի նշանակություն։ Ամրոցը հատակագծում կրկնում է տեղանքի կառուցվածքը։ Հարավային կողմից այն ունի երկու աստիճանաձև ելուստ և փոքր-ինչ դեպի դուրս կորացող պարիսպ։ Հյուսիսային պարիսպը նույնպես կորացած է, սակայն դեպի ներս ընկած։ Ստորին, ինչպես և վերին բերդի պարիսպները լավ ամրացված են որմահեղերով, բայց դուրկ են աշտարակներից։ Ամրոցաշինական տեսակետից ստորին բերդի ամենաթույլ պաշտպանված մասը արևմտյան պատի հյուսիսային հատվածն է, որն օղակված է միաշար պարսպապատով։ Ստորին բերդի արևմտյան հատվածում կառուցվել են պալատական համալիրները[21], բաղկացած ուղղանկյուն կենտրոնական դահլիճից, որան երկու կողմով հարակից միջանցքներից՝ 81×31 մ ընդհանուր տարածությամբ։ Դահլիճի չափերն են 83×15 մ։ Միջանցքները դուրս են գալիս դեպի պահեստային շինություններ և բաց բակը, ուր տեղադրվել է սրբարանների համալիրը։ Շինությունների հիմքերը տեղադրված են հարթեցված ժայռերի վրա։ Կենտրոնական դահլիճի հատակը կազմող ժայռերը փոքր-ինչ ցած են միջանցքների հատակների մակարդակից, և դրանց մեջ փորված են երեք ավազաններ, որոնց, հետևանքի հարցիքով, խմելու ջրի համար են ծառայել։ Սակայն, մեր հարցիրով, ճիշտ է Բ. Օգյունը[22], որը ենթադրում է, թե դրանք ոչ թե ավազաններ են, այլ հատուկ կառուցված ստորգետնյա խորշեր, որտեղ թաղումներ են կատարվել։ Այս ենթադրությունը ավելի հավանական է դասնում, եթե նշենք, որ դրսլատից դեպի արևելք կա բնական աղբյուր՝ հոսող ջրի տակ դրված քարե տաշտով։ Հոսող փոքր առվակով ջուրը դուրս է բերվել ամրոցից։ Հետևաբար, ամրոցի բնակիչները ջրի լրացուցիչ պաշարների կարիք չեն ունեցել։

Ա. Իրշանը ենթադրում է, որ այս պալատական շինությունները եղել են երեք հարկանի, ուր բարձրացել են քարե աստիճաններով։ Նրա ենթադրության միակ կռվանն այն է, որ պեղումների ժամանակ հատակի վրա նկատվել են երեք՝ մեկը մյուսի վրա նստած տանիքների հետքեր։ Սակայն աս-

---

18 Г. А. Меликишвили, նշվ., աշխ., № 27, էջ 9, 44, Ս. Գ. Հմայակյան, Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1985, № 1, էջ 162)։

19 Г. А. Капанцян, Об урартском божестве «Adaruiha» (ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1944, № 6—7, էջ 25, 26)։

20 Б. Б. Пиотровский, Кармир-блур II, Ереван, 1952, с. 24.

21 A. Erzen, նշվ. աշխ., էջ 8, 9։

22 B. Ögün, Die Urartäischen Bestattungs brauche in: Studien zur Religion und kultur Kleinasiens (Festschrift für Friedrich Karl Dörner Zum 65 Ceburtstag in 28 Februar, 1976, S. 675).

սիճանների հետքերի բացակայությունը, ինչպես նաև շերտերի ոչ մեծ հզորությունը այս ենթադրությունը դարձնում են նվազ հավանական։ Ճիշտ է, Վանի թագավորության կիրառական արվեստում կան բազմահարկ շենքերի պատկերներ, հատկապես Վանի հայտնի բրոնզե թիթեղը՝ եռահարկ շենքի պատկերով[23], սակայն մեզ առայժմ հայտնի են երկհարկանի շինություններ։ Իր միտքը ապացուցելու համար Ա. Էրզենը վկայակոչում է Կարմիր Բլուրի շինությունները, սակայն վերջիններս մեկ հարկանի են։ Դրանց տանիքների վրա բարձրացել են երկրորդ հարկի առաձին կառույցներ։ Այստեղից մըտնում էին ինչպես երկրորդ, այնպես էլ հատուկ աստիճաններով առաջին հարկը։ Նույնը նկատվում է Օշականի ամրոցում, որի մի հատվածը երկհարկանի է։ Այստեղ, ինչպես Կարմիր բլուրում, առաջին հարկը իջել են II հարկի հատակից[24]։

Ստորին ամրոցի կենտրոնական հատվածում պեղվել է Հայկաբերդի մի սրբարան, որն ուներ ցոլլայի տեսք։ Սրա շրջակայքում տեղադրված էին կարասներով պահեստներ, մի մեծ դահլիճ։ Սրբարանն ունեցել է քառակուսի հատակագիծ (արտաքին 10×10 մ չափսերով, ներքին՝ 4,5×4,5 մ)։ Ցելլայի ճակատը կառուցված էր լավ մշակված բազալտե խոշոր քարերից։ Մուտքի մոտ անկյունում պահպանվել է մի քանի քարերից բաղկացած սեպաձիր արձանագրություն։ Երկու քարերը պահպանվել են տեղում, իսկ 3-րդը և տասն քիվը բացակայում են, որի հետևանքով արձանագրության 1/3-ը նույնպես չկա։ Արձանագրությունը խոսում է այն մասին, որ ամրոցը կառուցել է Սարդուրի II-ը և այս սրբարանի աստծուն նվիրել է տաճարը։ Նման տեսքի տաճարներ հայտնի են Ալթին Թեփեից, Թոփրակ կալեից և Աղնտուր Թեփեից[25]։ Նշենք, որ Իրմուշինի տաճարի ներսի պատերը ներկված են կապույտ գույնով, ինչպես Ալթին Թեփեի տաճարում[26]։ Այս տաճարի հյուսիս-արևելյան պատից ոչ հեռու հայտնաբերվել է փոքր քարերով շրջապատված 21,5×21,5 մ չափերով մի հարթակ։ Այս հարթակի արևելյան հատվածում գտնվել են սպիտակ գույնով ներկված աղյուսի հետքեր, մի զոհասեղան և երկու զոհարան, իսկ հյուսիսային հատվածում՝ մի քարե սեղան։ Այս հայտնագործությունները ցույց են տալիս, որ այստեղ, ինչպես և Ալթին Թեփեում հայտնաբերվել են 3 զոհարաններ։ Տաճարի հարավային հատվածում հայտնաբերվել է մի դահլիճ (24×20 մ), որի տանիքը, ինչպես Կարմիր բլուրի, Արգիշտիխինիլի, Արծկեի խոշոր դահլիճների տանիքները, հենվում էր մասսիվ փիլոնների վրա։ Այս դահլիճի 4 պատերը, չնայած որ պահպանվել էին ոչ մեծ բարձրությամբ, զարդարված են եղել որմնանկարներով, որոնց լավագույության մասին, սակայն, հեղինակը չի նշում։

Տաճարին կից, արևելք-արևմուտք առանցքով կառուցված են եղել ամրոցի պահեստային շինությունները։ Դրանցից հետաքրքիր է մի շինություն, որն ունեցել է պատերին մոտ կանգնած փիլոններով ընդհանուր՝ 23,5×16 մ տարածություն, ուր հայտնաբերվել են 200 խոշոր կարաս։ Կարասները, ինչպես Կարմիր բլուրում, Արգիշտիխինիլիում, Էրեբունիում, Կայալիդերեում, Ալթին Թեփեում, թաղված են հողի մեջ։ Կարասների ուսերին պահպանված են տարողությանը վերաբերող սեպագիր և գաղափարագիր նշաններ[27]։ Չնայած հեղինակը չի նշում դրանց չափերը, կարելի է ենթադրել, որ Կարմիր բլուրի պահեստների հետ համեմատելով այստեղ 376 մ² տարածության վրա տեղադրված կարասներից յուրաքանչյուրն ունեցել է 500—600 լիտր տարո-

---

23 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962, с. 56.

24 С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан I, Ереван, 1988, с. 111.

25 Ch. Burney, D. M. Jang, The Peoples of the Hills Ancient Ararat and Caucasus, London, 1971, p. 140.

26 Նույն տեղում, էջ 149։

27 A. Erzen, նշվ. աշխ., էջ 11։

ղություն, իսկ պահեստը՝ շուրջ 100—120 հազար լիտր տարողություն։ Մ. թ. ա. VII դ. կառուցված խոշոր դահլիճը 1,5 մ լայնության միջնապատով բաժանվել է երկու նեղ շինությունների՝ 23,5×7 մ և 23×7 մ տարածությամբ։

Ամրոցի հետաքրքիր շինությունների թվին է պատկանում եզրային ամրոցը (Ուչկալեն), որը տեղադրված է ստորին բերդի արևելյան պատից ոչ հեռու գտնվող 27,5×17,5մ չափերի մի փոքրիկ բլուրի վրա։ Այս բլուրը, որը շրջապատված է եղել ինքնուրույն պարսպով, ստորին բերդի ներսում կազմում է մի առանձին ամրոց։ Այս բլրակի պարիսպները հում աղյուսից են, կառուցված քարե հիմքի վրա և պահպանվել են 4 մ բարձրությամբ։ Առանձին հատվածներում նկատվում են քարե սալերով ծածկված պատուհաններ, որոնք խոսում են այս շինության յուրահատուկ նշանակության մասին։ Այստեղ գտնված Սարդուրի II-ի սեպագիր արձանագրությունները վկայում են այս հատվածում կառուցված պահեստների մասին։ Հարավային մասում բացված երկու սենյակներում հայտնաբերվել են հարուստ բրոնզե իրեր, սաղավարտներ, կապարճներ՝ նվիրատվական սեպագիր արձանագրություններով, ինչպես նաև II հարկից ընկած որմնանկարների հետքեր։ II հարկի առկայության մասին վկայում են պատերի մոտ տեղադրված խոշոր փիլոնները, ինչպես նաև՝ աստիճանի հետքերը, թեև II հարկը չի պահպանվել։

Ինչպես վերը նշվեց, Հայկաբերդը բաղկացած է երկու՝ վերին և ստորին ամրոցներից, որոնք իրարից անջատվում են պարանոցով։ Ներսի տարածքում գտնվում են VII դ. կառուցված կացարանները։ Այս հատվածը, որն ունի 12 մ լայնություն և 110 մ երկարություն, հասնում է մինչև վերին ամրոցի փեշերը և գտնվում է հարթավայրից 70—80 մ բարձրության վրա։ Այստեղ՝ հյուսիսային, ավելի ցածր հատվածում, 1972—75 թթ. Էրզենը պեղել է մի հատված, որտեղ, նրա կարծիքով, հայտնաբերվել է երեք մշակութային շերտ՝ 1-ա) մ. թ. ա. VII դ. առաջին կես, 1-բ) մ. թ. ա. VII դ. երկրորդ կես, 2) մ. թ. ա. VI դ. առաջին կես և վերին՝ երրորդ շերտը, որը կազմված է եղել միջնադարյան դամբարանադաշտից։

1-ին տեռասում 1-ա և բ շերտերի ուսումնասիրության ժամանակ հայտնաբերվել են աստիճանաձև մեկը մյուսի վրա բարձրացող մի քանի կացարաններ։ Սրանց հիմքերը տեղադրված են եղել հարթեցված ժայռի վրա և մասամբ ունեն կիկլոպյան շարվածք։ Նեղքին կացարանները կցված են արտաքին պատին, և դրանց տանիքները ծառայել են իբրև յուրահատուկ հարթակներ՝ պարիսպները պաշտպանելու համար։

Այս հատվածի արևելյան պարսպի ծայր արևմտյան հատվածում, մինչև «եզրային ամրոցն» ընկած տարածքի վրա պեղվել են երեք կացարաններ։ Սրանց հիմքերը քարից են և մասամբ հարդարված են ռուստուշարով, որից բարձր նկատվում են հում աղյուսի պատերի հետքեր։ Դրանք գետ ուժեղ հրդեհից (ինչպես Կարմիր բլուրում) ստացել են վառ կարմիր գույն։ Առաջին երկու կացարաններն ունեն 3,3—4 մ լայնություն և 6—9,2 մ երկարություն, որոնց հարթ տանիքները ծածկված են գերաններով և եղեգնով։ Երրորդ կացարանն ունեցել է 9,4 մ լայնություն և 17,9 մ երկարություն։ Սրա պատերը նույնպես շարված են հում աղյուսից, քարե հիմքերի վրա։ Սենյակը կենտրոնում ունի խոշոր փիլոն։ Բոլոր կացարանների հատակները ծածկված են փոքր սալիկներով։ Երկրորդ կացարանի դռան մոտ հայտնաբերվել է 0,75 մ տրամագծով կլոր օջախ[28]։

Դեպի արևելք ընկած 1—3-րդ տեռասների մյուս հատվածներում պեղվել է ևս 8 սենյակ և մեկ խոշոր դահլիճ։ Սենյակները ուղղանկյուն են կամ քառակուսի և ունեն տափակ տանիք, իսկ դահլիճն ունեցել է հինգ սյուն, որոնցից պահպանվել են 35—36 սմ տրամագիծ ունեցող 5 սյունախարիսխ,

28 Նույն տեղում, էջ 19։

մեկը մյուսից 2,5 մ հեռավորության վրա։ Ինչպես և վերը նշված հատվածում, այս կացարանները ասոիճանաբար բառձրանում են տեռասների վրա, մի հանդամանք, որը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ դրանք պատերի վերին հատվածներում ունեցել են պատուհաններ։ Ըստ երևույթին, որանք եղել են բնակելի ռենյակներ, քանի որ այնտեղ չեն հայտնաբերվել արհեստանոցային իրեր կամ մեծ կարասներ։

Նման կացարաններ գտնվել են Հայկաբերդից 0,5 կմ արևմուտք՝ Ջեմբեկ բլուրի վրա։ Այս փոքրիկ բնակավայրի արտաքին պատերը ամրացված են որմահեցներով, իսկ անկյունները՝ փոքրիկ աշտարակներով։ Այն իր ձևով նմանվում է Օշականի ամրոցին[29]։

Հետաքրքիր նյութեր են տվել Հայկաբերդի արևելյան դարպասի շրջակայքում կատարված պեղումները։ Դարպասի հարավային պատից ոկսվում է 40 մ բարձրությամբ մի նլուստ, որը կատարում է յուրահատուկ աշտարակի դեր։ Այսպիսի նլուստի տեսակությունը հիշեցնում է Կարմիր բլուրի «սկյութական զարպասների» դիմաց դուրս ընկած աշտարակը, որը հնարավորություն էր տալիս պաշտպաններին դիմային կրակով արգելակել հակառակորդի ներխուժումը։

Ա. Երզենը չի ուսումնասիրել մ. թ. ա. VIII դ. դտածոները, որը նա ոկսել է հրատարակել իր դրքի 2-րդ պրակում, իսկ VII դ. նյութը ներկայացված է ոչ մեծ քանակով և ունի սխեմատիկ նկարագրություն։ Ներկայացված նյութերը բաղկացած են մի քանի խեցանոթներից, բրոնզներից, թասից, բրոնզե թասից, մի քանի նետասլաքներից և ոսկրե ձիասանձերից (սանձերի մի մասը սկյութական է) ու երկու կնիքներից։

Երկաթե նետասլաքները, որոնք ներկայացված են 7 օրինակներով, բաժանվում են երկու տիպի. 1-ին տիպը ներկայացված է 4 տերևաձև նետասլաքներով, որոնց ծայրերը կտրվածքում օվալաձև են և ունեն երկար կլորավուն պոչուկ, որի վերին մասում կա փոքրիկ խնձորակ։ Նման նետասլաքներ հայտնի են Իգդիրից[30], Կարմիր բլուրից[31], Երեբունիից[32], Ալթին թեփեից[33], Թոփրակ կալեից[34], Կայալի դերեից[35], Արդիշտիխինիլիից[36], Եղեգնաձորից[37] և ուրիշ վայրերից և թվագրվում են մ. թ. ա. VIII—VII դդ.։

2-րդ տիպը նման է առաջինին, սակայն մի քիչ փոքր է վերը նշվածներից և դուրկ խնձորակից։ Նման նետասլաքներ հայտնի են Արդիշտիխինիլիից[38]։

Բացի երկաթից, գտնվել են մի քանի բրոնզե նետասլաքներ, որոնք նույնպես երկու տիպի են։ Դրանցից երեքը տերևաձև են, կտրվածքում՝ ձվածիր կամ շեղանկյուն, ծայրերից հեռանում են սրածայր կարճ ճանկեր։ Կո-

---

29 Նույն տեղում, էջ 27. С. А. Есаян. Об урартских дворцовых..., с. 118.

30 Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский энеолит (Вестник музея Грузии, XIII—B, Тбилиси. 1944, табл. VII. р. 1—7, 11).

31 Б. Б. Пиотровский, Кармир-блур I, Ереван, 1950, рис. 22.

32 С. А. Есаян, Каталог археологических предметов музея истории города Еревана, вып. II, Ереван, 1967, с. 115, табл. XXVII, рис. 5.

33 T. Örgüç, Altintepe I. Türk Tarih Kurumu Basimevi, Ankara 1966, fig. 10 T. Özguc, Altintempe II, Türk Tarih Kurumu Basimevi Ankara 1969, Pl. XXXIV, fig. 16

34 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, рис. 49.

35 Ch. A. Burney, A first season of Excavations at the Urartian Catadel of Kalaldere. Anatolian Studies, vol. XVI, Ankara, 1966, Pl. XVIII.

36 А. А. Мартиросян, Նշվ. աշխ., նկ. 89 б:

37 С. А. Есаян, О. С. Хачикян. Находки биаинийских изделий в Ехегпадзоре (Հրատարակվում է)։

38 А. А. Мартиросян, Նշվ. աշխ., նկ. 89 б:

թառները, ինչպես նետասլաքների առաջին տիպում, երկար են, վերին մասում ձևավորված կլորացող խնձորակով։ Նետասլաքներից մեկի վրա պահպանվել է երկտող կարճ սեպագիր՝ «Խալդի աստծուն (տիրակալին) նվիրեցի»[39]։ Ցավոք, հեղինակը նկարը միակողմանի է պատկերել, և հակառակ կողմից նետասլաքը պատկերված չէ։ Նման նետասլաքներ հայտնի են Կարմիր բլուրից, որոնցից մեկի վրա կա արձանագրություն՝ «Խալդի աստծուն Սարգուրին նվիրեց»[40] բովանդակությամբ։ Հետաքրքիր է, որ այս նետասլաքները գտնվել են մարտակառքերով և հնձյալներով զարդարված կապարճի մեջ, որի վրա կա Սարգուրի II-ի արձանագրությունը[41], ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ վերոհիշյալ նետասլաքը պատկանում է Սարգուրի II-ին։

Երկրորդ տիպին են պատկանում նույնաձև նետասլաքները, որոնք զուրկ են ճանկերից[42]։

Ավելի մեծ թվով սկյութական նետասլաքներ են գտնվել, որոնք նույնպես բաժանվում են 2 տիպի։ Առաջին տիպը ներկայացված է 5 բրոնզե երկթև, տերևաձև օրինակներով, որոնք ունեն կարճ խողովակաձև կոթառ, կտրվածքում՝ ռոմբաձև և հեռացող կարճ ճանկով[43]։ Նման նետասլաքները Հայաստանում հայտնի են Մուսիերից, Շեյթան դաղից[44], Կարմիր բլուրից[45], Էրեբունիից[46], Արգիշտիխինիլիից[47] և մի շարք այլ հուշարձաններից[48]։

Երկրորդ տիպը ներկայացված է եռաթև նետասլաքներով[49]։ Նման նետասլաքներ Հայաստանում հայտնի են Ֆրանգանոցից, Արտաշատից, Նոյեմբերյանից, Կարմիր բլուրից և մ. թ. ա. VII—VI դդ. մի շարք հուշարձաններից[50]։

Բացի զենքերից, գտնվել են նաև ձիասանձի առանձին մասեր։ Դրանցից երկուսը ոսկրից տափակ պսալիաներ են (ձիասանձի մաս, դրվում է երախի արտաքին կողմից), որ կենտրոնական մասում ունեն երեք անցքեր[51]։ Դրանց ստորին մասերը կոտրված են, սակայն, ելնելով նույն ձևի պսալիաներից, կարելի է ենթադրել, որ գտնվածները ունեցել են ձիասմբակի տեսք։ Վերին պահպանված մասերը ներկայացված են եղջյուրավոր գրիֆոնի պատկերներով։ Ոսկրե նման պսալիաներ հայտնի են Թելշերայինից[52], Զիվիեից[53], որտեղից գտնվածի վերին մասը զարդարված է եղջյուրավոր ֆենդանու, ըստ երևույթին, խոյի գլխով։ Այս ֆենդանու ականջները ձգված են, իսկ եղջյուրները բոլորված են աչքերի շուրջը, մի հանգամանք, որը խիստ բնորոշ է վաղ սկյութական մշակույթին[54]։

---

39 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 40 (վերծանությունը՝ Հ. Կարագյոզյանի)։

40 Б. Б. Пиотровский, Ванское царство, с. 242, рис. 80.

41 Б. Б. Пиотровский, Кармир-блур III, Ереван, 1955, с. 40, рис. 30.

42 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 40։

43 Նույն տեղում, նկ. 38։

44 S. de Morgan, Mission scientifique at Câucase I, Paris, 1889, fig. 59, 60.

45 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, с. 242, рис. 81.

46 С. А. Есаян, М. Н. Погребова, Скифские памятники Закавказья. М., 1985, табл. V, рис. 1, 2.

47 А. А. Мартиросян, նշվ. աշխ., նկ. 108:

48 С. А. Есаян, М. Н. Погребова, նշվ. աշխ., էջ 56—61:

49 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 38։

50 С. А. Есаян, М. Н. Погребова, նշվ. աշխ., աղ. 7, 8:

51 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 61։

52 Б. Б. Пиотровский, Кармир блур I, рис. 61.

53 E. Parada, L'Iran ancien, Paris, 1963, fig. 71.

54 С. А. Есаян, М. Н. Погребова, նշվ. աշխ., էջ 92:

Երկրորդ տիպին են վերաբերվում վարազի ժանիքներից պատրաստված երեք անցքանի պսալիաները[55], որոնց նմանակները եզակի օրինակներով հայտնի են Կարմիր բլուրի քաղաքային համալիրներից[56], Էրեբունուց[57]։

Ոչ մեծ խումբ են կազմում Հայկաբերդում հայտնաբերված ոսկրե գործիքները։ Դրանք հիմնականում ներկայացված են տարբեր ձևերի իլիկի գլուխներով, գործվածքը վարսելու կտուտիչով, խոշոր ճարմանդով և ոչ մեծ աշտարակով[58]։ Իլիկի գլուխները հիմնականում ունեն կիսակլոր տեսք, կենտրոնում փոքրիկ կլոր անցք։ Դրանք հարթ են, մեկի մակերեսը զարդարված է կլորավուն փոսիկներով և կարճ գծիկներով։ Կտուտիչները հիմնականում ներկայացված են մեկ կողմից սրածայր, մյուսից՝ կլորավուն։ Միայն մեկ օրինակի երկու կողմերն են սրածայր։ Ինչպես իլիկի գլուխները, այնպես էլ կտուտիչները հաճախակի են հանդիպում վերը նշված հնավայրերում։ Եզակի հայտնագործությունների թվին է վերաբերվում ճարմանդը, որն ունի կենտրոնում փոսիկավոր ոսկրե ձող և հանդիպում է ինչպես բիայնական, այնպես էլ տեղական հուշարձաններում, սկսած մ. թ. ա. X դ. և հարատևում է մինչև մ. թ. ա. VI դ.[59]։

Համեմատաբար մեծ թիվ են կազմում խեցեղեն առարկաները՝ տարբեր սափորներ, կճուճներ, քրեղաններ և այլն, որոնք բաժանվում են մի քանի տիպերի։ Մեկ կանթանի սափորները ներկայացված են երեք օրինակներով[60]։ Դրանցից երկուսը կարմիր անգոբապատ, ոչ մեծ (15—16 սմ բարձրությամբ) մեկ կանթանի սափորներ են, ուռուցիկ կամ գնդաձև իրանով, փոքր-ինչ լայնացող վզով և օյնախոյայի տիպի շուրթով։ Երկուսի հատակներն էլ ունեն ցածր նստուկ։ Սափորներից մեկի վզի տակ արված է ներճկված գիծ, իսկ մյուսինը՝ կետազարդ գիծ։ 3-րդ սափորից պահպանվել է միայն կանթը։ Նման անոթներ հաճախակի են հանդիպում Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Էրեբունիից, Օշականից և այլ հնավայրերից։ Գտնվել են երկու փոքր-ինչ այլ տիպի սափորներ[61]։ Դրանցից մեկն ունի տանձաձև իրան և փոքր-ինչ ներճկված հատակ, ուսի վրա պահպանվել են ջարդված, կտրվածքում կլոր բռնակի հետքեր։ 2-րդ անոթը ձվաձև է (վիզը չի պահպանվել), ուսին մնացել են կտրվածքում կլորավուն բռնակի հետքեր։

Երկկանթանի սափորները ներկայացված են մեկ բաց շագանակագույն անզորով պատված անոթի բեկորով[62]։ Այն ունի փողաձև լայնացող վիզ (շուրթը ջարդված է) և դեպի վեր բարձրացող երկու բռնակ, կանթերի անոթին միանալու կետում ուսերը զարդարված են ոլորապտույտներով։ Նման անոթներ հայտնի են Հասանլու 4-րդից[63], Գյոյթեփեից[64], Ագրեբ

---

55 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 42։

56 А. А. Мартиросян, Город Тайшебаини, Ереван. 1961, с. 124, рис. 55.

57 С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян, Эребуни, М., 1979, с. 105, р. 113.

58 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 42։

59 С. А. Есаян, М. И. Погребова, Палочки-застежки в закавказских и скифских памятниках (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, № 1, էջ 81)։

60 A. Erzen, նշվ. աշխ., նկ. 31, 37/1, 2։

61 Նույն տեղում, նկ. 44, 46։

62 A. Erzen, նշվ. աշխ., էջ 46, նկ. 33։

63 T. C. Young, A Componative Ceramic Chronology for Western Iran, 1500-500. BC., Iran 3, 1965, fig. 2—3.

64 S. Burton-Brown, Excavations at Azerbaijan, 1948. London, 1951, fig. 36/102, 37/120.

բեյերից[65]։ Ռ. Դայսոնը, չնայած այդ անոթները թվագրում է մ. թ. ա. 500-ական թթ., այնուամենայնիվ, գտնում է, որ դրանք պետք է պատկանեն ուշ ուրարտական առարկաների թվին[66]։

Անկանթ սափորները երկուսն են։ Դրանցից մեկն ունի ուռուցիկ իրան, կարճ վիզ և կլորավուն շուրթ, և 2 լայն, հարթ հատակ։ 2-րդն ունի դեպի վեր ձգվող իրան, կարճ, փոքր-ինչ նեղացող վիզ, կլորավուն շուրթ, հարթ հատակ։ Իրանի կենտրոնում պահպանվել է վարպետի նշանը՝ ուղղահայաց գծի ձևով, որից հեռանում են կարճ գծիկներ։ Նման նշաններ հայտնի են Կարմիր բլուրից և Օշականից գտնված խեցեղեն իրերի վրա։ Մեկական օրինակով ներկայացված է մի փոքրիկ կոպիտ կճուճ, ուռուցիկ, ոչ հավասար իրանով, ձգված վզով և կլորավուն շրթով[67]։

Համեմատաբար մեծ թիվ են կազմում տարբեր ձևի քրեղանները, որոնք բաժանվում են 5 տիպի։

Առաջինին են վերաբերում երեք փոքրիկ քրեղանները[68]։ Դրանք ունեն կլորավուն կամ սրածայր շուրթեր։ Անոթներից մեկի հատակը օղաձև է, մյուսներինը՝ նեղ, հարթ։ Քրեղաններից մեկի ուսին պահպանվել է փոքրիկ կլորավուն բռնակ։ Երկրորդ տիպին են պատկանում նույնպես երեք քրեղաններ[69]։ Դրանք ունեն լայնացող իրան, փոքր-ինչ ներճկված ուսեր և լայն, դուրս ճկված շուրթ։ Երրորդ տիպը կազմում են երեք քրեղաններ[70], որոնք ունեն կլորավուն իրան, փոքր-ինչ եզրագծված ուսեր և կլորավուն շուրթ։ Չորրորդ տիպի քրեղանները երկուսն են[71], որոնք ունեն կլորավուն իրան, դեպի ներս ճկված կլորավուն շուրթ։

Հինգերորդ տիպը նույնպես ներկայացված է երկու քրեղաններով[72]։ Երկուսն էլ ունեն կլորավուն իրան, որն ավարտվում է ուղիղ կլորավուն շուրթով։ Երկու քրեղանների շուրթերի տակով անցնում են երկուական ներճկված գծեր։ Այդ երկու քրեղանները լայնորեն տարածված են Վանի թագավորության խեցեղեն արտադրության մեջ և հայտնի են Կարմիր բլուրից, Արգիշտիխինիլիից, Էրեբունիից և այլ հուշարձաններից։

Հետաքրքիր նյութերի թվին է պատկանում զույգ փոքրիկ հավասարաչափ սափորների բեկորը, որոնք մեկը մյուսին միացված են փոքրիկ անցքով։ Նման անոթներ մոտ տասը օրինակով հայտնի են Կարմիր բլուրից և մեկական օրինակով՝ Էրեբունիից և Արգիշտիխինիլիից։ Կարմիր բլուրի անոթներից մեկում գտնվել է այրված զանգված, որը Վ. Հովհաննիսյանի կարծիքով պանրի մերանի մնացորդ է։ Այն լրիվ համընկնում է ժամանակակից պանրի պատրաստման մերանին, որը բաղկացած է [illegible], ցորենի կամ կորեկի հատիկներից, խաղողի կորիզներից [illegible]։

Հայկաբերդում գտնված վերջին խեցեղեն իրը բաց [illegible] անգոբով, դեպի վեր ձգվող իրանով և կարճ սնամեջ ոտքով գավաթ է[74]։

Հայկաբերդում գտնված իրերի մյուս խումբը ներկայացված է [illegible] և պորֆիրիտե քարերից թասերով։ Դրանցից երկուսը տափակ [illegible]

---

65 O. W. Murcatella, Excavations at Agrap Tepe (Iran [illegible] Museum Journal 8, New York, 1973, fig. 15/16).

66 R. H. Dyson, Problems of Protohistoric Iran as run from [illegible] of Near Eastern Studies, Chicago 24, 1965, p. 13.

67 A. Erzen, նշվ. աշխ., էջ. 45։

68 Նույն տեղում, էջ. 36/7, 8, 37/3։

69 Նույն տեղում, էջ. 35, 36/1, 2։

70 Նույն տեղում, էջ. 36/3, 5, 6։

71 Նույն տեղում, էջ. 36/4, 9։

72 Նույն տեղում, էջ. 36/4, 6։

73 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 149—150.

74 A. Erzen, նշվ. աշխ., էջ. 34։

թասեր են, որոնք ունեն ոչ բարձր նստուկ[75]։ Ավելի հետաքրքիր է սև, կանաչավուն երանգավորումով թասը, որն ունի նեղ, օղակաձև հատակ։ Նման թասեր հայտնի են էրեբունիից, Արդիշտիխինիլիից, Կարմիր բլուրից, Օշականից և Վանի թագավորության մ. թ. ա. VIII—VII դդ. թվագրվող հուշարձաններից։ Հանվել է նաև մի բրոնզե թաս, որն ունի փոքր-ինչ լայնացող իրան և կտրված շուրթ[76]։ Հատակն ունի փոքր-ինչ ներս ընկած նստուկ։ Թասի եզրերը զարդարված են ուղղահայաց ներճկված գծերով։ Նման անոթները, առանց նշված նախշազարդի, մեծ քանակով հայտնի են պատահաբար հայտնաբերված նմուշներով, որոնք այժմ պահվում են Եվրոպական թանգարաններում։

Հայկարերդում գտնված ամենահետաքրքրական նյութերի թվին են պատկանում երկու կնիքները։ Դրանցից մեկը պատրաստված է կարմիր պորփյուրից և ունի կշռաքարի ձև։ Նրա կողային մակերեսը բաժանված է չորս շեղանկյուն բջիջների, որոնցից յուրաքանչյուրում տեղադրված են այծերի գլուխները և նիզակների պատկերներ։ Բացի դրանից, շրջանակի մեջ պատկերված է թևավոր էակ, որից ներքև խիստ ոճավորված կենդանիներ են։

Բջջաձև զարդանախշը հաճախակի է հանդիպում բիայնական դոտիների վրա, որոնք հայտնի են Անի-Պեմզայից[77], Ղարսի մարզի Զաքիմ գյուղից[78], Զիվեից[79], Ադանայից[80] և պատահականորեն հայտնաբերված՝ Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերից։ Այս բջիջների մեջ արված են տարբեր կենդանիների, գրիֆոնների, թևավոր ձիերի, առյուծների, ցուլերի, նետաձիգների և այլ պատկերներ։

Երկրորդ կնիքը պրիզմայի ձև ունի և պատրաստված է սև քարից։ Առաջին կողի վրա արված է մարդու մի սխեմատիկ պատկեր, որի ձգված ձեռքում կա փայտաձև (գավազան) իր։ Երկրորդ կողի վրա նույնպես մի մարդու սխեմատիկ պատկեր է, որը կանգնած է ինչ-որ մի կենդանու, ըստ երևույթին՝ ցուլի վրա և ձեռքում պահում է աղեղը։

Երրորդ կողին նույնպես ձեռքերը պարզած մարդու պատկեր է, որը կանգնած է կարիճի վրա։ Վերջին չորրորդ կողի վրա առյուծի վրա կանգնած մարդ է պատկերված, որը ձեռքերը առաջ պարզած, կարծես թե օրհնում է։ Այս բոլոր (բացի երրորդից) պատկերները հաճախակի են հանդիպում բիայնական բրոնզե դոտիների և բրոնզե նվիրատվական սալիկների վրա, ուր առյուծի վրա կանգնած պատկերը կապվում է Վանի թագավորության գերագույն աստված Խալդիի, իսկ ցուլի վրա կանգնածները՝ պատերազմի և ամպրոպի աստված Թեյշեբայի հետ։ Երկրորդ կնիքի պատկերների մեջ առավել հետաքրքիր է կարիճի վրա կանգնած մարդը։ Չնայած այս կոմպոզիցիան բիայնական արվեստում առաջին անգամ է հանդիպում, այնուամենայնիվ, դոտիների վրա երբեմն հանդիպում են կարիճի պոչ ունեցող տարբեր կենդանիներ։ Այսպես. հիշատակված Զիվեի ոսկե թիթեղի վրա պատկերված են կենաց ծառեր, որոնց երկու կողմում կանգնած են կարիճի պոչով թևավոր և եղջերավոր առյուծներ[81]։ Կարիճի պոչով նման առյուծները, հայտնի են Արևմտյան Հայաստանում պատահաբար հայտնաբերված և Տոկիոյի թանգա-

---

75 Նույն տեղում, նկ. 28, 29։

76 Նույն տեղում, նկ. 27։

77 Б. Б. Пиотровский. История и культура Урарту, рис. 96.

78 Նույն տեղում, նկ. 95։

79 P. A. Amadry, Propos du ireror de Ziwiye. Sranice, Antigue 6–8, 1970, pl. XXV.

80 O. A. Tasyürek, The Urartian belts in the Adana regional Museum, Ankara, 1975. fig. 3, 25.

81 Б. Б. Пиотровский, Ванское царство, с. 252.

ռանում պահվող գոտիներից մեկի վրա[82]։ Այս պատկերը չափազանց հետաքրքիր է և հնարավորություն է տալիս ենթադրելու, որ կարիճի մեջքին կանգնած էակը, ըստ երևույթին, կապվում է որևէ աստվածության հետ։ Եթե հաշվի առնենք Բ. Պիոտրովսկու կարծիքը, որ Կարմիր բլուրից գտնված կարիճի պոչով մարդկանց արձանիկները ամրոցի բնակիչներին պաշտպանում են հիվանդություններից, և Կարապետյանի այն կարծիքը, թե Իշտարխինի աստվածը բժշկությանը հովանավորող աստվածություն էր, ապա կարելի է ենթադրել, որ Հայկաբերդի կնիքի պատկերը Իշտարխինի աստվածն է, որը հանդես է գալիս Խալդի և Թեյշեբա աստվածների հետ։

Հետաքրքիր կնիքներ են հայտնաբերվել Հ. Օրբելու հետախուզությունների ժամանակ։ Դրանցից մեկի վրա պատկերված է մի զինվոր, որի կողքին պառկած է գլխատված մարդ. նրա ոտքերը մանրամասն ընդգծված են, մի հանգամանք, որը վկայում է, թե այդ մարդու կաշին քերթված է[83]։

Մյուս կնիքի վրա պատկերված է ձեռքերը վեր բարձրացրած կանացի թևավոր աստված։ Նրանից աջ ոչ է, իսկ ձախում՝ ծառ, որի կողքին կանգնած են երկու էակներ, կարծես աղոթելու պահին, որոնցից վերև նկարված են կիսալուսիններ[84]։

Որոշ տվյալներ կան Հայկաբերդի անկման վերաբերյալ, որ կրկնում են Վանի թագավորության մի շարք հուշարձանների, հատկապես՝ Կարմիր բլուրի, Արգիշտիխինիլիի և Օշականի անկման պատկերները։ Հայկաբերդում գտնված մի շարք սկյութական նյութեր, օրինակ. սանձերը, վկայում են, որ սկյութները մ. թ. ա. VIII դ. վերջում և VII դ. սկզբում բիայնացիների հետ ունեին խաղաղ հարաբերություններ և երբեմն փոխանակում էին իրենց իրերը։ Սակայն մ. թ. ա. VII դ. վերջում Վանի թագավորության թուլացման ժամանակ նախկին դաշնակիցները իրենց ուժերն ուղղում են Բիայնիլիի մի շարք ամրոցների վրա՝ գրավելով և ավերելով դրանք։

Հայկաբերդի անկման մասին են վկայում պարիսպների տակ հայտնաբերված սկյութական մի քանի հազար նետասլաքները[85]։ Հավանաբար, սկյութները գրոհից առաջ հսկայական քանակությամբ նետասլաքներ են արձակել ամրոցի վրա։ Ըստ երևույթին, դրանց ծայրի մասի [illegible], ինչպես Կարմիր բլուրում, կապված է եղել վառվող նյութ։ Այդ պատճառով էլ ամրոցում հրդեհներ են սկսվել, որից օգտվելով, սկյութները ներխուժել են ամրոց։ Այդ մասին են վկայում նաև ամրոցի պարիսպների տակ գտնված դիակները, որոնք ընկել են գրոհի ժամանակ։ Դրանցից մեկի մեջքին կապված էր բրոնզե գոտի, որի պատկերը, ցավոք, չի բերում Էրզենը։

Հայկաբերդի անկումից հետո, ինչպես մի շարք այլ ամրոցներում՝ Էրեբունիում, Արգիշտիխինիլիում, Օշականում և այլն, առաջանում է մի փոքրիկ բնակավայր։ Ի տարբերություն նախորդ շրջանի. այդ բնակավայրի կացարանները կառուցվել են միայն քարից, առանց հում աղյուսի։ Կացարանները հիմնականում եղել են ուղղանկյուն, մի քանիսի հատակին պահպանվել են կավե կոպիտ օջախներ, այդ թվում՝ կարասների ստորին մասերից պատրաստված օջախներ։ Որոշ սենյակներում հայտնաբերվել են թոնիրներ, որոնք հայտնի են Կարմիր բլուրից և Օշականից։

Այս բնակավայրի անկումից հետո Ուչկալեի ամրոցի տարածքում հետագայում հանդես է գալիս մի փոքրիկ միջնադարյան գերեզմանոց, որը

---

[82] K. Tanabe, A. Hori, S. Havashi, K. Isida, Studies in the Urartian Bronze Objects from Japanese Collections (Bulletin of the Ancient Orient Museum, vol. IV, Tokyo, 1982, fig. 39).

[83] Б. Б. Пиотровский, История и культура Урарту. с. 274.

[84] Նույն տեղում, էջ 277։

[85] A. Erzen, նշվ. աշխ., էջ 33—56։

կառուցված է, եղել նեղ սալերով քարարկղներից։ Այս հանգամանքը, հնարավորություն է տալիս դամբարանը թվագրելու վաղ միջնադարով, երբ դեռևս շարունակում էին գոյատևել անտիկ ժամանակաշրջանի դամբարանները, բայց քրիստոնեական եկեղեցին արդեն ուղեկցող նյութ տեղադրել դամբարանում։

Այսպիսով, Հայկաբերդի պեղումները բացահայտում են Վանի թագավորության մ. թ. ա. VIII դ. կառուցված կայսերական ամրոցներից մեկի պատկերը։ Չնայած մ. թ. ա. VIII դ. նյութերը դեռևս հրատարակված չեն, այնուամենայնիվ, ամրոցի և Իրմուշինիի տաճարի հատակագծերը, սրբանկարների և նեբեին հարդարանքի առկայությունը, ինչպես նաև բրոնզե բազմաթիվ իրերը, նվիրատվական արձանագրությունները խոսում են այն մասին, որ Հայկաբերդ ամրոցն ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն և, ինչպես Էրեբունին, Մուսասիրը և այլն, զարգացել է շքեղ լուսակի իրերով։

Հետագա ժամանակաշրջանի պեղումները վկայում են, որ Հայկաբերդը, ինչպես Էրեբունին, Արգիշտիխինիլին, Օշականը և այլն, ենթարկվել է [illegible] նոր շինություններ կառուցման հետևանքով։ Սակայն, ի տարբերություն նախորդ շրջանի, այդ կառույցները ավելի պարզունակ են, երբեմն էլ ոչ պատշաճ հարդարված։ Նման փաստերը խոսում են Վանի թագավորության տնտեսական ոլորտի թուլացման մասին։

Ամրոցի անկման մասին վկայող փաստերը հաստատում են, որ Հայկաբերդին վիճակվել է Վանի թագավորության համաժամանակյա ամրոցների բախտը, և այն կործանվել է սկյութա-մարական հարձակումների հետևանքով։

КРЕПОСТЬ АЙКАБЕРД

С. А. ЕСАЯН, Г. С. КИЛИМДЖЯН

Резюме

Один из лучших памятников Ванского царства—крепость Айкаберд расположена в 50 км. юго-восточнее Вана близ бывшего армянского села Аствацашен (ныне Чауш-тепе), на вершине хребта Болдаг. Изучением этой крепости, начиная с XIX в., занимались С. Ф. Лемман-Гаупт, И. А. Орбели, Ч. А. Барней и А. Ерзен.

Айкаберд состоял из верхней и нижней крепостей, защищенных однорядной стеной с многочисленными контрфорсами. Внутри крепости раскопками А. Ерзена открыт ряд дворцовых и хозяйственных сооружений, а также храм бога Ирмушини, в котором сохранились надписи Сардури II. Здесь обнаружен значительный археологический материал, датируемый VIII—VII вв. до н. э. (к сожалению, изделия VII в. до н. э. еще не опубликованы).

Крепость в конце VII в. до н. э. погибла под ударами скифов, о чем свидетельствуют несколько тысяч наконечников скифского типа, найденных под стенами и внутри крепости.

После гибели крепости в VI в. до н. э. здесь образовалось небольшое армянское поселение. В раннем средневековье на месте заброшенной крепости образовалось раннесредневековое армянское кладбище.